

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

NN ը/կ	Փուլ	Ռազմավարական նպատակ	Միջոցառում	Ակնկալվող արդյունք	Քանակական և որակական արդյունքային ցուցանիշ	Կատարող(ներ)	Վերջնա- ժամկետ	Ֆինանսա- վորման աղբյուր և կանխատես- վող չափ
1	2	3	4	5	6	7	8	9
1	Առաջին փուլ	Պետական կառավարում	Թվայնացման ինստիտուցիո- նալացում	<ol style="list-style-type: none"> 1. Թվայնացման մարմինների լիազորությունների, պարտականությունների և պատասխանատվությունների հստակեցում 2. ՀՀ ԲՏԱՆ կից թվայնացման մասնագիտական մարմնի ձևավորում, պետական կարևոր համակարգերի սպասարկման և զարգացման կոորդինացում: 	Մասնագիտական մարմնի ստեղծում/վերած լավորում, մասնագետների ներգրավում	ՀՀ Փոխվարչապետ S. Ավինյանի գրասենյակ, ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Մայիս 2021	Միջոցներ չեն պահանջվում
2	Առաջին փուլ	Պետական կառավարում	Թվայնացման ներկա համակարգերի գույքագրում և թվային ցուցանիշների վերլուծություն, թիրախային ցուցանիշների սահմանում	<ol style="list-style-type: none"> 1. Գործող և մշակվող թվային հարթակների և համակարգերի վերլուծություն, քանակական և որակական գնահատում 2. Թվային ներկա վիճակի վերլուծություն, ցուցանիշների սահմանում և ներկա վիճակի գնահատում ըստ սահմանված ցուցանիշների: 	1 միասնական էլեկտրոնային ռեգիստրի ստեղծում և գույքագրում ըստ սահմանված միասնական մեթոդաբանու- թյան	ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Մայիս 2021	Օրենքով չարգելված այլ միջոցներով

				3. Թիրախային սահմանում:	ցուցանիշների				
3	Առաջին փուլ	Պետական կառավարում	Թվայնացման ստանդարտներ, ձևաչափերի և ընթացակարգերի մշակում	1. Թվայնացման գործընթացների և պահանջների ձևավորման միջազգային ստանդարտների տեղայնացում 2. Կիբեռանվտանգության միջազգային ստանդարտների տեղայնացում 3. Տեխնիկական պահանջների միջազգային ստանդարտների տեղայնացում 4. Ֆունկցիոնալության միջազգային ստանդարտների տեղայնացում:	4 հիմնական ստանդարտների տեղայնացում/մշակում հիմնված միջազգային ստանդարտների վրա	«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Սեպտեմբեր 2021	65 մլն դրամ, պետական բյուջեի միջոցներով, Փորձագետների ներգրավում օրենքով չարգելված այլ միջոցներով	
4	Առաջին փուլ	Պետական կառավարում	Պետական ամպային ենթակառուցվածքային պահանջների/ստանդարտների մշակում	Պետական ամպային ենթակառուցվածքի, ամպային տեխնոլոգիաների պահանջների և դրանց սպասարկող ֆիզիկական տվյալների կենտրոնների տեխնիկական պահանջների և միջազգային ստանդարտների տեղայնացում:	1 միասնական ամպային ենթակառուցվածքի և տվյալների կենտրոնների նկատմամբ ստանդարտների տեղայնացում/մշակում	«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Սեպտեմբեր 2021	40 մլն դրամ, պետական բյուջեի միջոցներով, Փորձագետների ներգրավում օրենքով չարգելված միջոցներով	
5	Առաջին փուլ	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Ազգային կիբեռանվտանգության գերազանցության կենտրոն (ԱԿԳ կենտրոն)	«Կիբեռանվտանգության ինկուբատորի և R&D լաբորատորիա» կենտրոն՝ 1. Պետական և մասնավոր հատվածին կիբեռանվտանգության խորհրդատվական ծառայությունների մատուցում և աջակցում 2. Կիբեռանվտանգության ոլորտում որակյալ աշխատուժի պատրաստում 3. Կիբեռանվտանգության ստանդարտների, միջազգային փորձի վերլուծություն և պարբերական հաշվետվությունների մշակում	Նոր կառույցի ստեղծում և կիբեռանվտանգության քաղաքականության ապահովում	«Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ, «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,	1)Սեպտեմբեր 2021 2)Ռեկտեմբեր 2022	3 մլրդ դրամ, օրենքով չարգելված այլ միջոցներով	

				<p>4. Կիբեռանվտանգության գրագիտության բարձրացման և գիտելիքների զարգացման միտված ուղեցույցների մշակում՝ հանրային և մասնավոր հատվածի համար</p> <p>5. Կիբեռանվտանգության ստանդարտների պարբերական վերանայում և չափանիշների հաստատում:</p> <p>6. Ստանդարտների կիրառելիության ստուգում և համակարգերի սերտիֆիկացում:</p> <p>7. Կիբեռանվտանգության, արհեստական բանականության հետազոտական նախագծերի իրականացում և «ԴԵՄՈ» լաբորատորիաների ստեղծում</p> <p>8. Ինկուբացիոն/աքսելերացիոն ծրագրերի տրամադրում</p> <p>9. Կիբեռանվտանգության ոլորտում ստարտափերի աջակցում և խթանում:</p>		<p>ՀՀ Արդարադատության նախարարություն,</p> <p>ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն</p>		
6	Առաջին փուլ	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Տվյալների քաղաքականության հայեցակարգ	Տվյալների քաղաքականության հայեցակարգը կսահմանի տվյալների կառավարման, դրանց պատկանելիության և օրենսդրական դաշտի ներկա վիճակի և միջազգային փորձի վերլուծություն, կսահմանի առաջնահերթություններ, կտա գործողությունների ծրագիր սահմանված առաջնահերթություններին հասնելու համար:	1 Միասնական տվյալների քաղաքականության հայեցակարգի մշակում	<p>ՀՀ Թվայնացման խորհուրդ,</p> <p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ՀՀ Արդարադատության նախարարություն,</p> <p>ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն</p>	Դեկտեմբեր 2021	Օրենքով չարգելված այլ միջոցներով

7	Առաջին փուլ	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Լայնաշերտ ինտերնետի և թվային ծառայությունների հասանելիության զարգացման պլանի մշակում	<p>Հաշվի առնելով ցանցային/ինտերնետ ծառայությունների պահանջարկի և «COVID-19»-ի ի հայտ գալուց ի վեր հեռահար/հեռավար աշխատանքի, ուսման և տեղեկատվության ստացման ծավալների կտրուկ բարձրացումը, անհրաժեշտություն է առաջանում վերանայելու լայնաշերտ ինտերնետ կապի և հասանելիության ռազմավարական զարգացման մոտեցումները և մշակել զարգացման նոր պլան՝</p> <p>1. գույքագրելով և քարտեզագրելով ՀՀ պետական և մասնավոր հատվածում առկա և շահագործող օպտիկամալուխային տրանսմիսսիոն ցանցերը, դրանց թողունակությունները և համապատասխան ցանցային տոպոլոգիաները</p> <p>2. վերլուծել պահանջարկը ըստ մարզային բաշխվածությունների</p> <p>3. վերհանել տեխնիկական խնդիրները և առաջարկել համապատասխան լուծումներ</p>	1 միասնական էլեկտրոնային ռեգիստրի ստեղծում և գույքագրում ըստ սահմանված միասնական մեթոդաբանության, 1 զարգացման պլանի մշակում	<p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով</p>	Դեկտեմբեր 2021	Օրենքով չարգելված այլ միջոցներով
8	Առաջին փուլ	Պետական կառավարում	Ռազմավարության թարմացում ըստ Առաջին փուլի արդյունքների	Հաշվի առնելով ՏՏ ոլորտի առանձնահատկությունները և արագ զարգացման տեմպերը, առաջին փուլի արդյունքների հիման վրա կվերանայվեն ռազմավարության հիմնական դրույթները, ցուցանիշները և թիրախները:	Ռազմավարության թարմացված տարբերակ	ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Դեկտեմբեր 2021	Օրենքով չարգելված այլ միջոցներով

9	Երկրորդ փուլ	Պետական կառավարում	Ծրագրերի կառավարման էլեկտրոնային միասնական հարթակ	Նախագծերի կառավարման միասնական հարթակ: Բաղկացած է հետևյալ փուլերից՝ 1. նախատիպ կամ նվազագույն կենսունակ արտադրանք (minimal viable product), 2. ընդլայնված տարբերակ կամ ամբողջական ֆունկցիոնալ համակարգ:	1 միասնական ծրագրերի կառավարման համակարգի փուլային ներդրում	«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	1) Նոյեմբեր 2022 2) Դեկտեմբեր 2023	1) 80 մլն դրամ, 2) 250 մլն դրամ, պետական բյուջեի միջոցներով կամ օրենքով չարգելված այլ միջոցներով
10	Երկրորդ փուլ	Պետական կառավարում	Պետական թվային համալիր համակարգի ճարտարապետության մշակում և հաստատում	«Կետական թվային համալիր համակարգի միասնական և ամբողջական ճարտարապետության մշակում, որի արդյունքում կհստակեցվեն պետությունը որպես թվային ծառայություններ մատուցող միասնական ծառայությունների հարթակ e-gov և պետական ներքին կառավարման համակարգը (պետական գերատեսչությունները որպես ենթահամակարգեր) որպես միասնական ճարտարապետություն:	1 միասնական ճարտարապետության ստեղծում՝ ներառելով միկրոսերվիսային մոտեցումներ	«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Դեկտեմբեր 2022	100 մլն դրամ, պետական բյուջեի միջոցներով կամ օրենքով չարգելված այլ միջոցներով
11	Երկրորդ փուլ	Պետական կառավարում	Միասնական հենքի ստեղծում (Systems development unified framework)	Ընհանրական ծրագրային մոդուլների (լուծումների) հավաքագրում և նոր միասնական հենքի ստեղծում: Միասնական պետական թվային ճարտարապետության մշակում:	1 միասնական թվային հենքի ճարտարապետության ստեղծում, 5 ընդհանուր օգտագործման ենթամոդուլներ	«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	Դեկտեմբեր 2022	400 մլն դրամ, պետական բյուջեի միջոցներով կամ օրենքով չարգելված այլ միջոցներով

12	Երկրորդ փուլ	Պետական կառավարում	Տվյալների պահոցի ստեղծում	<p>Տվյալների պահպանման և մշակման տարածք, հարմարեցված ամպային տեխնոլոգիաներով և սերվերային համակարգերով, որը կունենա տեղեկատվության պահպանման, մշակման և տարածման հնարավորություն: Այն ուղղված է լինելու տվյալների արդյունավետ օգտագործման միջոցով բիզնես-գործընթացների իրականացմանը: Տվյալների պահոցում կհավաքագրվեն ՀՀ պետական մարմինների տեղեկատվական համակարգերի տվյալները, ինչպես նաև կապահովվի տվյալների ծրագրային և տեխնիկական անվտանգությունը: Միջոցառումների ծրագրի առաջին փուլի ամփոփման արդյունքում կնույնականացվեն պետական մարմինների էլեկտրոնային համակարգերի սերվերային ենթակառուցվածքների համար հատկացված ֆինանսական միջոցները, կվերահաշվահվեն և դրանց միայն մի մասը ընդամենը կուղղվեն տվյալների միասնական պահոցի ենթակառուցվածքի ընթացիկ սպասարկման աշխատանքների համար, ապահովելով խնայողություններ և ծախսերի արդյունավետության բարձրացում:</p>	1 միասնական տվյալների ենթակառուցվածքի ստեղծում, վիրտուալ բաժանումներով (հասանելիության և անվտանգության չափանիշների սահմանմամբ), ընդհանուր վերլուծական գործիքակազմով	<p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ՀՀ Վիճակագրական կոմիտե</p> <p>ՀՀ Կենտրոնական Բանկ</p>	Փետրվար 2023	12 մլրդ դրամ, օրենքով չարգելված այլ միջոցներով
13	Երկրորդ փուլ	Պետական կառավարում	Թվային փաստաթուղթ	<ol style="list-style-type: none"> 1. Կոնցեպտի մշակում 2. Ենթակառուցվածքի ճարտարապետության մշակում 3. Օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում 4. Համակարգի մշակում և գործարկում: 	1 ենթակառուցվածքային միասնական լուծում	<p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ԷԿԵՆԳ ՓԲԸ</p>	Մարտ 2023	2 մլրդ դրամ, պետական բյուջեի միջոցներով կամ օրենքով չարգելված

								այլ միջոցներով
14	Երկրորդ փուլ	Պետական կառավարում	Նոր էլեկտրոնային համակարգերի և թվային գործիքների մշակում ըստ հանրային կառավարման բարեփոխումների քաղաքականության առաջնահերթությունների	Պետական կառավարման մարմիններում գործընթացների թվայնացման շրջանակներում՝ ավտոմատացման ենթակա խնդիրների վերհանում և էլեկտրոնային համակարգերի /թվային գործիքների/ միջոցով նոր լուծումների մշակում և ներդրում	Առնվազն 300 նոր ծառայությունների թվայնացում և համապատասխան էլ. գործիքների/ համակարգերի մշակում և ներդրում	<p>ՀՀ Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ,</p> <p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ԷԿԵՆԳ ՓԲԸ</p>	Դեկտեմբեր 2025	Օրենքով չարգելված այլ միջոցներով
15	Երկրորդ փուլ	Պետական կառավարում, Տնտեսություն	Օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և փոփոխություն	Թվային զարգացման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների իրականացում 1. Էլ. ստորագրություն 2. Էլ. փաստաթուղթ 3. Էլ. կառավարում 4. Տվյալների քաղաքականություն 5. Թվայնացվող հարթակների նկատմամբ մտավոր սեփականության դաշտում իրավունքների կարգավորում	1 միասնական օրենսդրական կարգավորումների փաթեթ	<p>ՀՀ Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ,</p> <p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ՀՀ Արդարադատության նախարարություն,</p> <p>ԷԿԵՆԳ ՓԲԸ</p>	Դեկտեմբեր 2023	Օրենքով չարգելված այլ միջոցներով

						ՀՀ Կենտրոնական Բանկ		
16	Երկրորդ փուլ	Հասարակություն	Հաշմանդամու- թյուն ունեցող անձանց համար թվային ծառայությունների հասանելիություն	<p>1. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ-ների հետ քննարկումներ</p> <p>2. Հաշմանդամություն, այդ թվում՝ տեսողության, լսողության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց՝ Պետական ծառայությունների միասնական հարթակից հավասար իրավունքներով օգտվելու պահանջների ուսումնասիրություն և հնարավորությունների պահովում</p> <p>3. Մատչելի լուծումների (Text to Speech և Speech to Text փոխակերպումներ և այլն) մշակում և իրականացում:</p>	Առնվազն 5 ֆունկցիոնալ լուծումների մշակում և ներդրում	<p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	Դեկտեմբեր 2022	Օրենքով չարգելված այլ միջոցներով
17	Երկրորդ փուլ	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	e-gov Պետական ծառայությունների թվային միասնական հարթակ v2.0	Պետական ծառայությունների միասնական հարթակ, որը մատուցում է քաղաքացուն և բիզնեսին ամբողջական թվային ծառայությունների փաթեթը տվյալ սուբյեկտի անձնական կամ կորպորատիվ էջից: Բոլոր գերատեսչությունների կողմից մատուցվող թվային ծառայությունները համակարգվում են միասնական մոտեցմամբ՝ օգտագործողի տրամաբանության տեսանկյունից:	1 միասնական էլեկտրոնային կառավարման հարթակ իր ենթահամակարգ երով (առնվազն 30 նոր ծառայություն)	<p>ՀՀ Փոխվարչապետ Տ. Ավինյանի գրասենյակ</p> <p>ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,</p> <p>ՀՀ շահառու գերատեսչություններ</p>	Դեկտեմբեր 2022	Օրենքով չարգելված այլ միջոցներով

18	Երկրորդ փուլ	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Ինքնության նույնականացում, վավերացում և էլ. ստորագրություն	Էլեկտրոնային ծառայությունների օգտագործելիության մակարդակը բարձրացնելու, և պետական թվային ծառայությունների օգտվելու գործընթացը ավելի արդյունավետ կազմակերպելու համար, նախատեսվում է զարգացնել սուբյեկտի նույնականացման, վավերացման և էլ. ստորագրության մեխանիզմները, ներգրավելով ժամանակակից սարքեր (ID Card, Smart ID, mobile ID և այլն)	1 ընդհանուր ենթակառուցվածք և էլեկտրոնային ստորագրության արդիականացում	ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ Ոստիկանություն, ԷԿԵՆԳ ՓԲԸ ՀՀ Կենտրոնական Բանկ	Սեպտեմբեր 2022	2 մլրդ դրամ, օրենքով չարգելված այլ միջոցներով
19	Երկրորդ փուլ	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Կրթություն՝ Թվային հմտություններ	Թվային տեխնոլոգիաների օգտագործման Կրթական ծրագրերի իրականացում, Թվային տեխնոլոգիաների սպասարկման կրթական ծրագրերի իրականացում, Թվային տեխնոլոգիաների ստեղծման կրթական ծրագրերի իրականացում, Թվային տեխնոլոգիաների կիրառման և փոխանցման կենտրոնների ստեղծում (Technology transfer centers)	Էլեկտրոնային գործիքների կիրառում՝ նվազագույնը 60%, 16-65 տարեկան քաղաքացիների շրջանում	ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ Էկոնոմիկային նախարարություն	Դեկտեմբեր 2025	Օրենքով չարգելված այլ միջոցներով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	Ցուցանիշ	Պետական կառավարում						Տնտեսություն						Հասարակություն						
		2020	2021	2022	2023	2024	2025	2020	2021	2022	2023	2024	2025	2020	2021	2022	2023	2024	2025	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
1	Էլեկտրոնային կառավարման զարգացման ինդեքս (E-Government Development Index - EGDİ): *ինդեքսում ընդգրկված հիմնական բաղադրիչներ՝ - Էլեկտրոնային ծառայություններ - Հեռահաղորդակցության ենթակառուցվածքներ - Մարդկային կապիտալ (Կրթություն՝ թվային հմտություններ)	68 դիրք	60 դիրք	52 դիրք	43 դիրք	34 դիրք	լավագույն 25 դիրքերում													

2	Էլեկտրոնային կառավարման գործիքների կիրառում							45%	50%	55%	60%	65%	70%	15%	22%	29%	36%	43%	50%
3	Էլեկտրոնային առևտրի գործիքների կիրառում							17%	21%	25%	30%	35%	40%	13%	20%	27%	35%	42%	50%
4	IPv6 կարողունակության ինդեքս (Capability index)	7.5%	20%	32.5%	45%	57.5%	70%	7.5%	20%	32.5%	45%	57.5%	70%	7.5%	20%	32.5%	45%	57.5%	70%

* Հասարակություն - չափահասներ

* Տնտեսություն – ՓՄՁ- ներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

NN ը/կ	Ռազմավարական նպատակ	Նպատակային ցուցանիշ
1	2	3
1	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2025թ. Հայաստանը կընդգրկվի ՄԱԿ-ի «Էլեկտրոնային կառավարման զարգացման ցուցանիշ (ինդեքս)»-ով լավագույն 25 երկրների ցանկում: (Այժմ գտնվում է 67-րդ դիրքում, կբարելավվի 42 դիրքով)

2	Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2025թ. ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերի 80% ապահովված կլինեն լայնաշերտ ու բարձրորակ ինտերնետ կապով և պետական թվային ծառայությունների հասանելիությամբ: (Այժմ այդ ցուցանիշը մոտ 40% է):
3	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2022թ. կատեղծվի Ազգային Կիբերանվտանգության Գերազանցության Կենտրոնը, որը կհանդիսանա պետական համակարգերի կիբերանվտանգության գրավականը, կապահովի անձնական տվյալների պաշտպանություն և կխթանի կիբեր գրագիտության զարգացումը:
4	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2023թ. ՀՀ պետական և մասնավոր հատվածի տվյալները հնարավոր կլինի պահպանել հատուկ ստեղծված տվյալների պահպանման, մշակման և փոխանցման կենտրոնում հիմնված ամպային ենթակառուցվածքների տեխնոլոգիաների վրա: Ենթակառուցվածքը նաև տարածաշրջանային նշանակություն կունենա:
5	Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2025թ. բոլոր պետական կայքերը և էլեկտրոնային համակարգերը կունենան միասնական չափանիշներ ու ճարտարապետություն և ամբողջությամբ հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:
6	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2025թ. կթվայնացվեն և առցանց կմատուցվեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող շուրջ 300 ծառայություններ, մասնավորապես շուրջ 150 լիցենզիաները և թույլտվությունները հնարավոր կլինի ստանալ առցանց, այդ թվում նաև շինարարական թույլտվությունների տրամադրման գործընթացը ամբողջությամբ կթվայնացվի:
7	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2025թ. կառավարությունը բացառելու է ծառայությունների ստացման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ այցելելու անհրաժեշտությունը: Իրավաբանական անձանց հետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հաղորդակցվելու են բացառապես էլեկտրոնային եղանակով, իսկ քաղաքացիները՝ գերազանցապես էլեկտրոնային եղանակով:
8	Հասարակություն	Մինչև 2025թ. կառավարությունը բացառելու է քաղաքացուց փաստաթղթեր և տեղեկություններ պահանջելու դեպքերը, եթե նման փաստաթղթեր արդեն իսկ առկա են որևէ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանում:
9	Հասարակություն	Մինչև 2022թ. արտերկրում գտնվող մեր քաղաքացիներին բազմաթիվ ծառայություններ (անձնագրի փոխում, վավերականության ժամկետի երկարաձգում, տեղեկանքների տրամադրում և այլն) կմատուցվեն առցանց:

10	Պետական կառավարում, Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2024թ. ՀՀ պետական բոլոր կայքերից և էլեկտրոնային համակարգերից հնարավոր կլինի օգտվել նաև էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ:
12	Տնտեսություն, Հասարակություն	Մինչև 2025թ. տարբեր կրթական ծրագրերի միջոցով կբարձրացվի բնակչության թվային և կիրքերանվտանգության ոլորտում հմտությունների մակարդակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ